


DOI: 10.54503/0515-961X-2024.77.3-74

ՌԱՖԱՅԵԼ ԼԵՎՈՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ (ծննդյան 90-ամյակին)



Լրացավ վաստակավոր երկրաբան, ՀՀ ԳԱԱ երկրաբանական ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, երկրաբանամիներալոգիական գիտությունների դոկտոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Ռաֆայել Լևոնի Մելքոնյանի 90-ամյակը:

Ռ. Մելքոնյանը ծնվել է 1934 թ. նոյեմբերի 29-ին Երևանում ՀԽՍՀ պետական գործիչ Լևոն Մխիթարի Մելքոնյանի ընտանիքում: 1953 թ.-ին, ավարտելով Երևանի Ձերժինսկու անվան միջնակարգ դպրոցը արժաթե մեդալով, ընդունվում է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետ, որն էլ գերազանցությամբ ավարտում է 1958 թ.՝ ստանալով ճարտարագետ-երկրաբանի որակավորում: Նույն թվականին աշխատանքի է անցնում ԽՍՀՄ երկրաբանության նախարարության, Անդրկովկասի տարածքում ռադիոակտիվ հումքի (ուրանի) պաշարների հայտնաբերման և հետախուզման հայտնի Գրոմովյան արշավախմբի 103-րդ երկրաբանական ջոկատում որպես երկրաբան-ճարտարագետ: 1960 թ.-ից տեղափոխվում է ՀԽՍՀ ԳԱ (հետագայում՝ ՀՀ ԳԱԱ) երկրաբանական գիտությունների ինստիտուտ (ԵԳԻ), որտեղ 64 տարի շարունակ աշխատելով զբաղեցրել է գիտական քարտուղարի (1973–1976 թթ.), Պետրոլոգիայի և իգոտոպային երկրաբանության լաբորատորիայի վարիչի (1976–2010 թթ.), գիտության գծով փոխտնօրենի (1981–1988 թթ. և 1993–2017 թթ.) պաշտոններ: Երիտասարդ գիտաշխատողի գիտական հետաքրքրություններն ի սկզբանե կենտրոնացած էին Ալավերդու հանքային դաշտի ինտրուզիվ գոյացումների պետրոգրաֆիական, միներալոգիական և երկրաքիմիական ուսումնասիրությունների վրա:

1970 թ. երիտասարդ գիտաշխատողը Մոսկվայում պաշտպանում է «Ալավերդու հանքային շրջանի ինտրուզիվ համալիրները» թեկնածուականատենախոսությունը և ստանում երկրաբանամիներալոգիական

գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Իր թեկնածուական թեզում Ռ.Մելքոնյանը առաջին անգամ ապացուցում է այդ հանքային դաշտի ինտրուզիվ համալիրների սկզբնական հալոցքների բազալտային կազմի առկայությունը, որը տրամագծորեն տարբերվում էր նախկինում գերիշխող սկզբնային հալոցքների թթու գրանիտային կազմի մասին եղած պատկերացումներից և հիմնավորում պղինձ-հրաքարային հանքայնացման կապը այդ բազալտային հալոցքների խորքային օջախների հետ:

Ճանաչված գիտնականը 1989 թ. ԽՍՀՄ ԳԱ մետաղական հանքավայրերի, երկրաբանության, պետրոգրաֆիայի, միներալոգիայի և երկրաքիմիայի (ИГЕМ, Մոսկվա) գիտահետազոտական ինստիտուտի գիտական խորհրդում հաջողությամբ պաշտպանում է դոկտորական ատենախոսությունը «Փոքր Կովկասի մեզոզոյան կղզադեղային գրանիտոիդային ֆորմացիաների պետրոլոգիան և հանքաբերությունը» թեմայով և ստանում երկրաբանամիներալոգիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Դոկտորական աշխատանքում, որի ընդդիմախոսներից էր ականավոր գիտնական, վրաց ակադեմիկոս Գ.Ա. Տվարչելիձեն, բացահայտվել և նորովի են մեկնաբանվել Փոքր Կովկասի կղզադեղային համալիրների երկրաբանական կառուցվածքի, հանքագոյացման և պետրոլոգիական որոշ առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Ռ. Մելքոնյանի մանրակրկիտ ուսումնասիրությունների արդյունքում Փոքր Կովկասի տարածաշրջանի համար առաջին անգամ առանձնացվել է պղինձ-մոլիբդենային հանքավայրերի տոնալիտային մոդելի նոր կղզադեղային տիպ՝ Թեդուտ, Ոսկեպար, Շիկահող՝ Հայաստանում, Կաշեն Արցախում՝ կապված վերին յուրայի հասակի թթու կազմի տոնալիտային ֆորմացիաների ինտրուզիաների հետ, ինչպես նաև հայտնագործվել են մի շարք պղինձ-մոլիբդենային հանքերակումներ՝ Ծաղկաշեն Ալավերդու շրջանում և այլն: Հայաստանի օրինակով առաջին անգամ ցույց են տրվել տարբեր երկրադինամիկ պայմաններում կղզադեղային (Թեդուտ-Կաշեն և ուր.) և կոլիզիայի հետևանքով առաջացած (Քաջարան-Ագարակ և ուր.) պղինձ-մոլիբդենային պորֆիրային հանքավայրերի սկզբունքային տարբերությունները:

Մագմային հալոցքների ասիմիլյացիայի և դիֆերենցիացիայի գործընթացների տարբերակման համար Ռ. Մելքոնյանի կողմից (համահեղինակ՝ Մ. Հակոբյան) մշակվել է թթվածնաիզոտոպային հետազոտությունների մի նոր մեթոդ և առաջին անգամ ապացուցվել է պղինձ-մոլիբդենային հանքավայրերի առաջացման մեջ հիդրոթերմալ լուծույթների կազմում ծովային ջրերի և դրանցում պարունակվող

ծծմբի ակտիվ մասնակցության փաստը: Ռ. Մելքոնյանը (համահեղինակներ՝ ԵԳԻ-ի գիտաշխատողներ Ռ. Տայան, Ռ. Ղուկասյան, Մ. Հարությունյան) ռուբիդիում-ստրոնցիումային իզոտոպային հետազոտությունների արդյունքում բացահայտել է Մեդրու պլուտոնի առաջացման երեք տարատեսակ և տարահասակ ինքնուրույն համալիրներ և առաջին անգամ պարզաբանել է երկու տարբեր հասակի՝ բարտոնի (41–37 մլն տարի) և վերին ոյուպելի (31–28 մլն տարի) հասակի մոնցոնիտների առկայությունը այդ պլուտոնում:

Ռ. Մելքոնյանը (համահեղինակներ՝ Ռ. Մորից, Դ. Սելբի, Ռ. Տայան, Ռ. Ղուկասյան, Մ. Հովակիմյան) առանձնացրել է հայ-իրանական պղինձ-մոլիբդենային պորֆիրային հանքայնացման մոտ 2000 կմ ձգվածության նոր դիսկրետ պրովինցիա, որի սահմաններում տեղաբաշխված են այնպիսի հսկայական հանքավայրեր, ինչպիսիք են Քաջարանը Հայաստանում և Սար-Չեշմենը հարավային Իրանում:

Ականավոր գիտնականը վերջին տասնամյակներում դեկավարել և համադեկավարել է ՀՀ տարածքի մագմայականության և մետաղագոյացման տարբեր միջազգային աշխատանքային խմբերի (ԱՄՆ, Թայվան, Շվեյցարիա և այլն), մի շարք գիտական խոշոր նախագծեր (INTAS, SCOPES, CRDF և այլն): Հայ-ֆրանսիական համագործակցության արդյունքում կարևոր և նոր տեղեկատվություններ են ստացվել ՀՀ տարածքի օֆիոլիտների մասին (համահեղինակներ՝ Ա. Ավագյան, Ղ. Գալոյան, Տ. Դանիելյան, Յ. Ռոլլանդ, Լ. Սահակյան, Մ. Սոստոն և ուր.): Ռ. Մելքոնյանը հեղինակ և համահեղինակ է ավելի քան 130 գիտական աշխատությունների, այդ թվում՝ մի շարք հոդվածների արտասահմանյան բարձր ազդեցության գործակից ունեցող պարբերականներում, 4 մենագրության (3-ը՝ համահեղինակությամբ), որոնցից մեկը նվիրված է Արցախի երկրաբանությանը և օգտակար հանածոներին, 6 ձեռագիր հաշվետվությունների: ՀՀ տարածքի մի շարք երկրաբանական ու մետաղական օգտակար հանածոների տարբեր մասշտաբի քարտեզների համահեղինակ է: Զգալի է գիտնականի ավանդը երկրաբանական գիտությունների պատմության ուսումնասիրման ասպարեզում: 1994 թ.-ից ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» գիտական պարբերականի խմբագրական կոլեգիայի անդամ է, իսկ 2018 թ.-ից՝ գլխավոր խմբագիր:

Ռ. Մելքոնյանը մշտապես աչքի է ընկնում առանձնահատուկ աշխատասիրությամբ և պատասխանատվության բարձր զգացումով, լայն գիտական մտափորձով, մեղմաբար և համեստ վարքագծով և իր գործընկերների շրջանում վայելում է մեծ հեղինակություն:

Երկրաբանությանը մատուցած ծառայությունների համար 1985 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր երկրաբան պատվավոր կոչումը: 2000 թ. Ռ. Մելքոնյանը ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, 1998 թ.՝ ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, իսկ 2022թ. նրան շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործիչի պատվավոր կոչում: 2010 թ. պարգևատրվել է Եվրոպայի բնական գիտությունների ակադեմիայի Լեոնարդո Էյլերի անվան մեդալով, 2013 թ.՝ ՀՀ Անանիա Շիրակացի մեդալով:

*ՀՀ ԳԱԱ քիմիայի և Երկրի մասին գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ*